

Այա կատարուեցաւ մրցանակներու եւ վկայագրերու բաշխում, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմէ, որ փակման խօսքը եւ օրհնութիւնը կատարեց գնահատելով կատարուած կրթական եւ մշակութային աշխատանքը: Յորդորեց աշակերտներուն՝ նոխացնել Ս. Հոգիէն իւրաքանչիւրին բաշխուած մոֆի եւ հոգիի շնորհները, ֆիզիքապէս մարզուած մնալ,

պարտականութեանց կատարման մէջ գուարթամիտ եւ աշխոյժ մշակները դառնալու համար Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ: Հանդիսութիւնը վերջացաւ՝ միացեալ երգուած Ս. Աթոռոյ Մաղթերգով «Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն ի նոր» եւ Պատրիարք Սրբազան Հօր Պահպանիչով եւ «Հայր Մեր»ով:

ԱՆՈՒՇԱՒԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂԶԱՆԵԱՆ

Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՄՆԵՐ

Սրբոց Թարգմանչաց Մանկապարտէզի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 30 Մայիս 1998ին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր: Ծաղիկ դասարանի հինգ աշակերտներ շրջանաւարտութեան վկայական ստացան: Միաբանութեան անդամներու, ծնողներուն եւ ներկայ հասարակութեան գոհունակութիւնը մեծ էր, ի տես մանուկներու աշխուժութեան բեմին վրայ, դեկավարութեամբ երկու ուսուցիչներուն՝ Օր. Սուսաննա Միրզոյեանի եւ Օր. Այրին Գաբլանեանի:

Իսկ 7 Յունիս 1998, Կիրակի երեկոյին, նոյն սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամսվերջի հանդէսը, նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր եւ ներկայութեամբ Միաբանութեան անդամներուն, ծնողներուն եւ հասարակութեան: Տասըմէկ շրջանաւարտներ եւ դպրոցի երգչախումբը կոկիկ յայտագիր մը հրամցուցին, հինգ լեզուներով իրենց երախտագիտութիւնը յայտնելով Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, ուսուցչական կազմին եւ իրենց ծնողներուն: Վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Թէոդորոս Արք. Զաքարեանի

տեղեկագրէն յետոյ, մրցանակներու բաշխումը տեղի ունեցաւ: Պատրիարք Սրբազան Հայրը, իր գնահատական եւ փառալիչ խօսքին ընթացքին, Գալիֆորնիոյ մէջ կազմուած Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութեան հաստատած մրցանակներն ալ յանձնեց, Պր. Սեդրակ Պաղտոյեանի անունով հաստատուած հիմնադրամէն յատկացումներ կատարելով Հայերէն Լեզուի եւ Հայոց Պատմութեան, իսկ Օր. Տիգրանուհի Նալպանտեանի անունով՝ Անգլերէն Լեզուի եւ Ընդհանուր Գիտութեան մէջ յաջողագոյն աշակերտներուն: Իսկ Տիկին Արսինէ Քասախեանի անունով հաստատուած մրցանակը տրուեցաւ նախակրթարանի մէջ Բարձրագոյն Միջին ստացած աշակերտին:

Ի պատիւ շրջանաւարտներուն, Հայ Երիտասարդաց Միութիւնը 11 Յունիսին, եւ Հայ Օգնութեան Միութիւնը 15 Յունիսին, իրենց ակումբներուն մէջ ճաշկերոյթով եւ նուէրներով պատուեցին շրջանաւարտները, երգի, արտասանութեան, մաղթանքի խօսքերով, վարչականներուն, Տեսուչ Հայր Սուրբին, Շրջանաւարտներուն եւ Սրբազան Հօր կողմէ: